



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5135

91.99(077)

U-25

2010

Մ Է Ք Օ Տ

Յ Ա Ր Ա Գ Բ Ո Ւ Թ Ե Ա Ն

Ը Օ Տ Լ Ա Ր Ո Ւ Մ



Գ Ր Ե Ա Ց Հ Ե Տ Ե Ռ Գ Ռ Թ Ե Ա Մ Բ
Գ Ր Ի Գ Ր Գ. Ս Ա Ր Ա Յ Ե Ա Ն
Ն Ա Ի Կ Ի Ն Ա Շ Ա Կ Ե Ր Տ Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Կ Բ Թ Ա Ր Ա Ն Ի



Կ. ՊՕԼԻՍ

Տ Պ Ա Գ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն Զ Ա Դ Ա Ր Ե Ա Ն
Ս Ո Ւ Թ Ա Ն Հ Ա Մ Ա Մ, Ի Յ Գ Ա Յ Ի Թ Ա Ն Ը Ս Տ Ե Մ Թ Ի Ի Բ

1879

491.99 (077)
U-25

3924

3924

ՇԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ


ԸՍՏ ԼԱՐՈՒՄԻ

ԳՐԵԱՅ ՀԵՏԵՒՈՂՈՒԹԵԱՄԲ

ԳՐԻԳՈՐ Գ. ՍԱՐԲԱՓԵԱՆ

ՆԱԽԿԻՆ ԱՇՍԿԵՐՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՐԱՐԱՆԻ

1233



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՍՈՒԹԱՆ ՀԱՄԱՄ, ԻՆՎԱՆԵ ԽԱՆԵ ՀԱՅՏԵՍԻ ԹԻՒ 14

28289-43

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Լեզու մը սորվելու ամէնէն դիւրին կերպը գործնականն է . յիրաւի մայր մը միայն կրնայ կրթել այս փոքրիկ հասակը որ ամենեւին խօսիլ չը դիտեր : Բայց երբ չափահաս լինի , այսինքն ուսանելու առտիճանին հասնի , մօրմէն զատ ուրիշ մը պէտք է որ անոր սորված գործնական դասը շարունակէ . դասատուն պարտքն է այս՝ և դասատուի մ'ալ միշտ լաւ դասադրքեր պէտք է : Ահաւասիկ քանի մը բառով ցուցուցի այն մէթօտը , որուն հետեւած եմ այս փոքրիկ գործին մէջ : Քայլ մ'է այս որ բնութեան կը դիմէ , և այսպէս սովորին ուսում չ'է , այլ դբօսանք մը : Ենթադրելով որ աշակերտը լեզուին կանոնները սովորած է , որոշեցի այնպիսի կերպ մը դանել , որով անոր երկայն ճանապարհը կարճանայ , և աւելի ապահով քայլերով յառաջանայ :

Դասատուք կրնան երբեմն աշակերտաց դրժուար եկող դասերը զեղջել կամ փոխել :

2002



11360-57

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Մ Է Թ Օ Տ
Շ Ա Ր Ա Դ Ի Ռ Ի Թ Ե Ա Ն

Ը Ս Տ Լ Ա Ր Ո Ւ Մ Է

Մ Ա Ս Ն Ա .

Դ Մ Ս Ա .



1. Տղայ մը ծածկած աման մը կը տանէր . մէկը զայն տեսնելով հարցուց թէ ի՞նչ կար ամանին մէջ . տղան պատասխանեց . « Եթէ ի՞նչ ըլլալը քել ցուցնել ուզէի , ծածկած չէի տանէր :

Աշակերտը պարտի վերայիչեալ անձանց տեղ մէկ մէկ անուն զնել . այսինքն . — Կարպետ ծածկած աման մը կը տանէր . Յսկոք զայն տեսնելով հարցուց թէ ի՞նչ կար ամանին մէջ . Կարպետ պատասխանեց . « Եթէ ի՞նչ ըլլալը քել ցուցնել ուզէի , ծածկած չէի տանէր :

2. Մարդ մը արեւին մէջ նստած կը տարնար . ուրիշ մը զաշով անոր առջև կեցաւ , և հարցուց թէ արդեօք բանի մը պէտք ունի . « Այ , պատասխանեց մարդը , միայն թէ արեւս մի խափաններ :

վերոյիշեալին համեմատ յարմարոյնել :

3. Մարդ մը կը պարծէր թէ շատ մեծ քաջութիւններ բրած է : Հարցուեցաւ որ մը թէ ի՞նչ քաջութիւն բրած ունի . « Ես , ըսաւ մարդը , կռուոյ մը մէջ խիտտ արագութեամբ մարդու մը ստրեղը և ձեռքերը կտրեցի » . « Ինչո՞ւ գլուխը չկտրեցիր » . — « Քանզի արդէն կարուած էր : Նոյնպէս :

ԴՄԱ Բ.

1. Գասատուն իւրաքանչիւր աշակերտը իւրարմէ հեռու նստեցնելէ և անոնց գրիչներն ու տետրակը պահել տալէ ետքը , փոքրիկ պատմութիւն մը կը պատմէ , և կը պատուիրէ որ իւրաքանչիւրը զայն գրի առնէ և ցուցնէ :

2. Աշակերտք իրենցմէ մէկմէկ փոքրիկ պատմութիւն կը գրեն , և դասատուն սխալները կուղղէ :

ԴՄԱ Գ.

1. Գասատուն իւրաքանչիւր աշակերտին զատ զատ քանի մը գոյականներ և ածականներ գրելու կուսոյ տախտակին վրայ , և աշակերտք բայեր յարմարոյնելով՝ անոնց մէջ տեղերը պատմութիւն մը կը կազմեն :

Ինչպէս . — Յակոբ , և , Յովհաննէս , սիրելի ,

բարեկամներ , միշտ , միասին , և , երբեք , իւրարմէ , միայն , պէտք , ատեն :

Եւ աշակերտը կը գրէ . — Յակոբ և Յովհաննէս սիրելի բարեկամներ էին . միշտ միասին կ'աշխատէին , և երբեք իրարմէ չէին զատուեր , միայն պէտք եղած ատեն :

ԴՄԱ Դ.

1. Գասատուն յուսակ մը կը պատմէ , և իւրաքանչիւր աշակերտ ուշադրութեամբ մտիկ ընելէ վերջը , կ'եննեն կարգաւ տախտակին վրայ անուններն կամ կենդանիները փոխելով՝ նոյն առակը դարձեալ կը գրեն , և դասատուն իւրաքանչիւրին տախտակին քովէն հեռացած առանձնը , իրենց կարողութեան համեմատ մէկմէկ ծառի կամ անասունի կամ ուրիշ ո և է բանի մը անունը վերնագիր տալով կը պատուիրէ որ միւս դասին նոյն վերնագիրներուն տակ տասնական տող մէկմէկ առակ յարմարցնեն :

ԴՄԱ Ե.

1. Գասատուն պարտի աշակերտաց գրածները սրբադրել :

2. Իւրաքանչիւր աշակերտ մէկզմէկէ զատ զատելէ վերջը , իրենց գրքերը առջեւին կ'առ-

նեն և հետեւեալը գրաբար կ'ընեն : Գառառուն տեարակներէն մէկը կը սրբագրէ բարձրաձայն , որպէս զի միտեղ սրբագրեն :

ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՄԻ

Թագաւորական արծիւը արծիւներուն ամենէն մեծն է : Էզը մէկ մէթը և քոսն սանթիմէթը երկայնութիւն ունի : Սրուն մէկ մէթը միայն . իսկ թեւերը երկու մէթրէ աւելի տարածութիւն ունին : Կտուցը խիստ զորաւոր է . ետեւի ըզունդները խիստ երկայն են , և երբեմն մինչեւ տասներկու սանթիմէթը երկայնութիւն կունենան : Սովորաբար իւր բոյնը ժայռերու անմատչելի դարաւանդներուն վրայ կը շինէ : Այս բոյնը փայտի փոքրիկ կտորներով շինուած է , և այս կտորները եղէգի և հաւամբզուոյ շատ մը խաւերով ծածկուած է : Էզը երկու կամ երեք ձու կ'ածէ միայն , և երեք օրուան մէջ կը թխտէ : Չագերը ծնած ատեննին գրեթէ ճերմակ են . յետոյ փետուրները կը դեղիննան , և երբ չափահաս ըլլան , խարտեաշ գոյն մը կ'առնուն :

ԴՅՍ 2.

1 Հետեւեալ գծերը լեցնել :

Ծեր և համեստ պարտիզպան — աղքատաց շատ բարութիւններ կ'ընէր , և կ'ըսէր . « Այս

դեռ փոքրիկնէն իմ'է մայաւին — ձգուած » : Սը մը հարցուցին թէ ի՞նչ կը նշանակեն այս խօսքերը : Քանի մը տղաք զրկեցէք մրդաստանս ըսաւ , հրաման պիտի տամ ծառի մը պտուղներէն ուտելու , արգիլելով որ իրենց դրպանը չը դնեն : Եկող — մին մայաւին տակ շատ մը — նետեց ուտելու ատեն որ դայած ատեն առնէ : Երբ — մեկնեցան պարտիզպանց հան դանուողներուն ըսաւ . « Այս խարէութիւնը մարդուս ալ կը պատահի շատ — , մենք աշխարհի բարութիւնները կը վայելենք առանց հետեւնիս բան մը բերելու , բայց — որ կուտանք աղքատաց , պարտիզի մը մայաւին — կը նետենք , յաւիտեակա՛նութեան մէջ վերստին դանելու համար :

2. Քսան հատ տան կահ կարասիքի անուն գրել :

ԴՅՍ Է.

1. Աշակերտք հետեւեալներուն նման տասնական խօսք գրեն :

Շողոնաւին շոգի (իսլիմ) ձգելը , մեկնելու մօտ ըլլալուն նշանն է :

2. Հետեւեալ առակին խօսքերն ու տէրբայինները փոխելով մարդոց վրայ յարմարցնել : Կաղնին օր մը եղեգին ըսաւ . « Տես ինչպէս

փոքրիկ հովիւ մը կը ծռիս, իսկ ես ուժգին և սաստիկ հովերու իսկ ականջ չեմ կախեր: Հաղիւ թէ այս խօսքը ըսաւ, և ահա արեւելքէն այնպիսի ուժգին հով մը սկսաւ փչել, որուն ամբարտաւան կաղնին դէմ չ'կրնալով դնել, արմատախիլ եղաւ ինկաւ. իսկ եղեգը իւր գլուխը խոնարհեցնելով, այնպէս կեցաւ մինչեւ որ հովին ուժգնութիւնը իջաւ:

ԳՄՍ Ը.

1. Հետեւեալներուն քով իրենց գէմքին համեմատ մէկ մէկ բայ դնել:

Ես — . դու — . նա — . մենք — . դուք — . նորքա — . ես եմ որ — . դու ես որ — . Աստուած է որ — . քու բորած գուբդ դու — . կովերը իրենց փարախը — . եղբայրներդ — . թագաւորը իւր զօրքերուն նուէր — . Զքեզ բոլոր սրտովս — . կարապետ զայն — . Դասատուներդ — . Այս անգամ անոր յանձանքին — . Լաւ — ձեր դասերը . դասի ատեն ուշադրութեամբ դասատուիդ — :

2. Հետեւեալ անասնոց աղաղակները նշանակել.

Առիւծը — . Ձին — . Էջը — . Շունը — . Կատուն — . Ոչխարը — . Օձը — . Աքաղաղը — . Ճանճը — . Մարդը և թութակը — :

3. Հետեւեալ իրերուն ձայները և յատկութիւնները նշանակել:

Տերեւը — . Դրօշակը — . Զանգակը — . Թընդանօթը — . Արձականքը — . Գետը — . Հովը:

ԳՄՍ Թ.

1. Հետեւեալ բաւերուն տեսակները որոշել: Արեգակ (աստղ) . Լուսին . Մարտ . Ուրբաթ . Կօշիկ . Բաճկոնակ . Ապարանջան . Առիւծ . Թղենի . Գլխարկ . Մեղու . Արծիւ . Պակլա . Գինի . Թուր . Ոսկի . Աթու . Դահեկան:

2. Գրել հինգ հատ մարդոց յատուկ անուն.

»	»	»	կանանց	»	»
»	»	»	անասնոց հասարակ	»	»
»	»	»	իրերու	»	»
»	»	»	գրքերու յատուկ	»	»
»	»	»	»	հասարակ	»

ԳՄՍ Ժ.

1. Հետեւեալ բաւերուն գրաբար սեռականը և տրականը գրել:

Հասակ . Անկում . Երկաթ . Մարդ . Մարդագետին . Տեսարան . Շուն . Տօն . Հաւիթ . Բամպակ . Կաթ . Կոկորդիլոս . Պատմութիւնք . Անասուն . Հաւ . Լեղու .

2. Հինգ հատ դաւառի անունն .

»	»	քաղւի	»
»	»	դետի	»
»	»	լեռներու	»
»	»	կղզիներու	»
»	»	ծովերու	»
»	»	Ժողովրդոց	»
»	»	մարդու	»
»	»	կնօջ	»

ԴԱՍ ԺԱ.

1. Սշակերտք կարգաւ տախտակին վրայ ելնելով կը գրեն :

Հինգ հատ թագաւորի անունն .

»	»	մարգարէի	»
Երեք	»	Թագուհւոյ	»
»	»	մետաղի	»
»	»	ծագիլի	»
»	»	վայրի ծառի	»
»	»	» կենդանեաց անունն .	
»	»	օգտակար	»
»	»	թռչնոց	»
»	»	միջատի	»
»	»	1 կուտ ունեցող սլաղոց	»
»	»	շատ կուտ ունեցող	»

ԴԱՍ ԺԲ.

1. Հետեւեալները գրել :

Երեք հատ կարասեաց անունն .

»	»	նուագարանի	»
»	»	արուեստի	»
»	»	արհեստաւորի	»
Հինգ	»	ամսու	»
Երեք	»	մշակութեան գործիքի անունն .	
Հինգ	»	օրուան	»
Երեք	»	վայրի անվաս կենդանեաց	»
»	»	դէնքերու	»
»	»	լճերու	»
Հինգ	»	գիւղերու	»

ԴԱՍ ԺԳ.

1. Հետեւեալ գծերը լեցնել :

Շարթուան մէջ — օր կայ : Շարթիւր վերջինն է , այսինքն շարթուան — օրը : Տարուան մէջ — ամիս կայ , որք — օր ունին , որք են Յունվար , Մարտ , Մայիս , Յուլիս , Օգոստոս , Հոկտեմբեր , Դեկտեմբեր : — Ամիս կայ որք — օր ունին , և են , Սեպտիլ , Յունիս , Սեպտեմբեր , Նոյեմբեր . և — ամիս , որ — օր ունի , և որ է Փետրվար : — Տարին անգամ մը փետրվարը —

օր է : Մէկ օրը — ժամ է , մէկ ժամը — վայրկեան , և մէկ վայրկեանը — երկվայրկեան : Մարդս — ոտք ունի , իսկ անասունները — ոտք ունին : Մարդս մէկ — , երկու — , մէկ — , երկու — ունի :

2. Հետեւեալ բառերուն ածականները գտնել :

Առաքինութիւն , Յաղթութիւն , Թշուառութիւն , Աւազ , Պատմութիւն , Հարստութիւն , Պողաբերութիւն , Դժուարութիւն , Դիւրութիւն , Թաղաւորութիւն , Դաշտ , Յաւիտենականութիւն , Յիմարութիւն , Բարկութիւն , Որդի , Ասիա Բարեկամ :

ԴԱՍ ԺԴ .

1. Հետեւեալներուն մէկմէկ աղէկ և մէկմէկ գէշ յատկութիւն տալ :

Առիժ . Առակ . վարդ . Գուն . Դատ . Զըմեռ . Յաւ . Դպրոցական . Պտուղ :

2. Հետեւեալներու երկերկու յատկութիւն տալ :

Անապատ . Հոգի . Բարեկամ . Դէմք . Զուր . Իշխեր . Դեռ . Ծառ . Լեռ և Զայն . Հով :

3. Հետեւեալ ածականներուն երկուքական անուն գրել :

Թանձր . Կանաչ . Զարմանալի . Սուր . Առոյգ . Կակուղ . Ծնորհալի . Խորին . Քաղցր . Հաւատարիմ . Տկար . Առատ . Սասեցուցիչ . Մեծ . Սիրելի . Զգուելի :

և. Հետեւեալներու իգականները գտնել :

Մարդ . Արու . Հայր . Հօրեղբայր . Փեսայ . Որդի . Եղբայր . Կնքահայր . Տէր . Պարոն . Երկտասարդ . Ընկեր . Թաղաւոր . Կայսր . Իշխան . Դուքս . Ծառայ . Ագաղաղ :



ՄԱՍՆ Բ.

ԴԱՍ Ա.

1. Հետեւեալ անամնոց հանգամանքները նշանակել:

Խնչպէս. — Կապիկ - ճարտարութիւն, ճարտար: Կատու. Ծուն. Աղուէս. Առիժ. Վազը. Մըջիւն. Ոչխար. Ուղա. Փիղ. Եղջերու. Գայլ. Կրեայ. Սկիւռ. Էշ. Մեղու. Ձի:

2. Հետեւեալ դժերը լեցնել:

Բոլոր հիւանդութիւնները — չեն.

- » խոստումները — »
- » թռչունները — »
- » բարեկամները — »
- » ձմեռները — »
- » կոմները — »
- » դինկները — »
- » մարդիկ — — »
- » տեսարանները — »
- » հասկերը — »
- » ուսուցչները — »
- » գեղանկարները — »
- » ցաւերը — »

1. Հետեւեալ դժերը լեցնել:

Բոլոր — հոտատու չեն.

- » — պտղատու »
- » — ներքի »
- » — խելացի »
- » — անտանելի »
- » — թիւնաւոր »
- » — ցեխոտ »
- » — օգտակար »
- » — նմանող »
- » — երջանիկ »
- » — ամուր »
- » — լաւ »
- » — բարի »
- » — արագընթաց »
- » — նաւարկելի »

11360-5X

2. Հետեւեալ բայերուն մէկմէկ անուն տալ:

Կը մօտենայ. կը հրամայէ. սուլեց. կը լուսաւորէ. կը հոսի. կը մարցէ. կը հնազանդի. կը հասնի. հասաւ. կոկնէրակոսի վարձատրուի. պայթեցաւ:



ԴՄՍ Գ .

1. Հետեւեալը գրաբար ընել :

Սառէ գիւղը

Երկու ամիսէ աւելի էր որ ձմեռը բնութիւնը տխրեցուցած , և կծու ցուրտ մը բոլոր էակները թմբրեցուցած էր . վայրի կենդանիք իրենց որջերուն մէջ կծկուած կը կենային . և սուսկերն ու ծառերը , իրենց տերեւներէն մերկացեալ , մեռեալ էակներու կը նմանէին : Թռչունք իրենց քաղցր երգը դադրեցուցած էին . միայն խիստ հեռուէն ագռաւին կռիչքները կը լսուէր : Ամեն բան միակերպ և տխուր էր : Բայց գիւղին տղաքները սաստիկ կռիւ մը կ'ընէին , և իրենց յիմարային ուրախութիւնը կարծես ձմեռուան սաստկութեամբը գոգռուած էր : Առատ ձիւն մը բոլոր մարդերը կը ծածկէր , և այս շգեղ ծածկոցը , զոր միայն գիշեր մը կարող եղած էր զայն դաշտին վրայ տարածելու , դպրոց գացող մանկական խումբէն ուրախութեան հաղարաւոր աղաղակներով ողջունուեցաւ : Ամէնքը առտուան աշխատութենէ ետքը զուարճալի պտոյտ մ'ըրին : Պատերազմը ցորեկին պիտի սկսէր , և ճաշի զանգակը կուոյ նշան ընտրուեցաւ :

(Շարունակելի)

ԴՄՍ Գ .

1. Հետեւեալ խօսքերը վերջացնել :

Աստուած կ'ուզէ , և ամէն մարդիկ կը հնազանդին :

Աստուած ուզեց :

— պիտի ուզէ :

Եթէ — ուզած ըլլար :

2. Միտքը կը հրամայէ , մարմինը կը հնազանդի :

Միտքը հրամայեց :

— պիտի հրամայէ :

Եթէ — հրամայէ :

Եթէ — հրամայած ըլլար :

Պէտք է որ — հրամայէ , որպէսզի :

3. Չմեռը կերեւայ , ծիծեռնակները կը մէկնին :

— երեւցածին պէս :

— երեւցաւ :

Եթէ — երեւցած ըլլար :

Ահաւաստիկ — , ծիծեռնակներ :

Կ. Երբ փողը հնչուի , պատերազմը կ'սկսի :

— հնչուեցաւ :

— պիտի հնչուի ,

Եթէ — հնչուած ըլլար ,

Հնչեցէք — , որպէսզի :

Յ. Ա. քիւլլէս կերեւար Տրուլացիք կը յաղթը-
ուէին :

— երեւցաւ .

Եթէ — երեւար .

Եթէ — երեւցած ըլլար .

Թող — երեւայ , որպէսզի :

ԴԱՍ Ե .

1. Հետեւեալ խօսքերը վերջացնել :

Մարդ կ'երթայ , կուգայ , կը վազէ , կը քա-
լէ , կ'ուտէ , կը խմէ , կ'իջնէ , կ'ընէ , կը մագլցի ,
կը լողայ , կը մեռնի :

Ո՛վ մարդ միշտ կ'երթաս :

Միշտ պիտի երթաս :

Ի սկզբանէ անտի կ'երթաս :

Աստուած քեզի ըսաւ դնա :

Աստուած մարդու ըսաւ պէտք է որ երթաս :

Ո՛վ մարդ , ինչո՞ւ միշտ կ'երթաս :

Պիտի տեսնեմք որ մարդ միշտ պիտի երթայ :

Գանի որ մարդ ես պէտք է որ երթաս :

Աստուած հրամայեց մարդու երթալ :

ԴՅՍ Զ .

1. Մասն երկրորդ դաս չորրորդը գրաբար
ընել :

ԴՅՍ Է .

1. Հետեւեալը գրաբար ընել :

Սառէ գիւղը (Շարունակութիւն)

Երկիրը պատերազմի ռազմամթերաց առատ
պաշարով ծածկուած էր : Սակայն դասը հան-
դարտ էր , և աշխատութիւնը կարգադրուած
հրապուրիչ գրօսանքէն վրաս մը չկրէց . քանզի
լաւ գիտէին որ եթէ գրօսանքները դատին վրա-
սէին , նաև աւելի իրենց զուարճութեանց կը
վրասէին : Նոյն օրը և ոչ մէկը իբր բանտարկեալ
գալրօցը մնաց :

Աշակերտները երկու թշնամի բանակներու
բաժնուեցան , երկու կողմէն ալ մէկմէկ հրամա-
նատար գրուեցաւ . և իսկոյն բոլոր դէրքերը
բռնուեցան : Ամէնէն փոքրերը կուտին համար
դնտակներ կը պատրաստէին , և նշանը տրուե-
լուն պէս ընդհանուր աղաղակ մը վերթաւ : Ու-
սուցիչը պատահելիք վրասներուն , և երիտասարդ
պատերազմիկներուն քաջասրտութեանը վրայ դա-
տաւոր դրուեցաւ : Գծուարին հրահանգին այս
խաղերը կը սիրէր , որք մարմինը կը զարգացը-
նէն և ոյժը կը կրկնապատկեն . բայց հոն կը
նստէր վրասակար փորձերը արգիլելու համար ,
և երբեմն իւր ձայնը խիստ առոյգ աշխոյժ մը և

յանդուզն քաջատուութիւն մը կը կասեցնէր :
 Կռիւր երկար ժամանակ տեւեց , բայց վերջա-
 պէս յողնութիւնը ամէնէն պատերազմասէրնե-
 րուն աշխոյժն ալ կասեցուց : և երբ ուսուցիչը
 տեսաւ որ պատերազմը դադարել կ'սկսէր , յաղ-
 թողներն ու յաղթողները իւր քովը կանչելով .
 « Ահաւասիկ ամենալաւ բարեկամներս , ըսաւ ա-
 նոնց , ձիւնը այս առաւօտ լաւ դրօսանք մը տը-
 ուաւ ձեզ , պէտք է որ հիմա ալ ձեր ուսման
 ծառայէ : — Ո՛վ կ'ստեղծէ ձիւնը էօժէն :

(Շարունակելի)

ԴԱՍ Ը.

1. Հետեւեալ խօսքերը վերջացնել :

Աստուած կը հրամայէ , աշխարհ կը հնա-
 ղանդի , արեգակը կը փայլի , երկիրը կը դառ-
 նայ , մարդս կը ծնանի , չորքոտանիք կը վազեն ,
 թռչունք կը թռչին , ձուկերը կը լողան , տուն-
 կերը կ'աճին , գետերը կը հոսին , ազրիւրները
 կը ցամքին :

Աստուած հրամայեց

Աստուած պիտի հրամայէ .

Քանի որ Աստուած հրամայած է , պէտք է որ
 եթէ Աստուած հրամայէ

եթէ Աստուած հրամայէր

Պէտք է որ Աստուած հրամայէ
 Պէտք է որ Աստուած հրամայէր
 Ինչո՞ւ երբ Աստուած կը հրամայէ
 Ինչո՞ւ երբ Աստուած հրամայէ , աշխարհ չը
 պիտի հնազանդի :

ԴԱՍ Թ.

1. Պատերազմը կ'սկսի , թնդանօթը կ'որոտայ ,
 փողերը կը հնչուին , հրացանները կը լեցուին ,
 ատրճանակները կը պայթին , զօրքերը կը պատ-
 րաստուին , սուրերը կը շողան , արիւնը կը հո-
 սի , դրօշակները կը ծածանին :
 Ըստ նախընթացին շինել :

ԴԱՍ Ժ.

1. Նամակ մը յորում գործերը գէշ գացող
 մարդ մը իւր բարեկամներէն մէկէն օգնութիւն
 կը խնդրէ :

ԴԱՍ ԺԱ.

Հետեւեալը գրաբար ընել :

Սառէ գիւղը (Շարունակութիւն)

էօժէն , կարծեմ , պարոն , Աստուած կստեղ-
 ծէ զայն :

Ուսուցիչ. Անշուշտ, տղաս, Աստուած է որ կատեղծէ ամեն բան: Բոլոր տարին ձիւն կա՞յ:

Էօժ. Ո՛չ, պարոն, երբ միայն ցուրտ է:

Կարողս. Եւ երբ ցուրտ չ'է, կ'անձրեւէ:

Էօժ. Զիւնը սառած անձրեւ է:

Ուս. Այո՛, բայց բաժանեալ անձրեւ ինչպէս օդին մէջ, ամպի կամ շագիի նման: Երբ կարկուտ կուգայ, գետինը ինչպէն վերջը սառի ձեւ կ'առնէ: Մեր երկրին մէջ երկու երեք անգամ ձմեռը միայն կը ձիւնէ, և այն ալ երկար ժամանակ չ'մնար երկրի վրայ:

Մշակութեան մեծ ծառայութիւն կը մատուցանէ, ցորենի փոքրիկ ծկերը ձիւնին տակ չ'են մեռնիր, քանզի միայն ձիւնին ցուրտը կզգան, որ այնչափ զգալի չ'է. քանի որ եթէ երկրիս վրայ ձիւն չըլլար, աւելի շատ պիտի պղպէն և պիտի կորուէին: Օր մը աւելի երկայն պիտի խօսիմ ձեզ ասոր վրայ:

Բայց եթէ ձիւնը մեր կլիմաներուն մէջ գէշութիւն մը չպատճառեր, քանի մը երկիրներու մէջ այսպէս չ'է, ուր խիստ տխուր և թշուառ կ'երեւի: Զմեռը այս բնութենէ զուրկ եղող երկիրներու մէջ Օդոտոտսէն կ'սկսի, և հետեւեալ տարուան մինչեւ Յունիս ամիսը կը տեւէ: Սուկալի ցուրտ մը կը թաղաւորէ հոն. քանզի չորս,

հինգ և գրեթէ վեց ամիս արեգակը հորիզոնին վրայ չ'երեւար:

Պօղ. Ի՛նչ, արեգակ չկա՞յ: Եւ ի՞նչպէս կըրնան ցորեկը տեւնել:

Ուսուց. Սիրելի բարեկամս, ցորեկ չկայ հոն առուցեալ. գիշեր մը երկիրը կը ծածկէ, որ երբեմն արտաքոյ կարգի լոյսով մը կը լուսաւորուի, և որ կը կոչուի հիւսիսայգ: Այս երեւոյթը խիստ հազուադիւր է այն երկիրներուն մէջ, ուր բոլոր տարին արեգական ներկայութիւնը կը վայելեն:

ԴԱՍ ԺԲ.

1. Փոթորիկը կ'սկսի, ծովը կ'ալեկոծի, ջուրերը կը փրփրին, արեւները կը մռնչեն, նաւերը կը փախչին: (Մասն Բ. դաս Բ.ի համեմատ շինել և գրաբար ընել):

2. Արեգակը կ'երեւայ, գիշերը կ'անհետի, մութը կը փարատի, թռչունները կ'սկսին երգել, բնութիւնը կը վերականգանանայ:

(Նոյնպէս):

ԴԱՍ ԺԳ.

1. Նամակ մը՝ յորում աղքատ մարդ մը հիւանդ ըլլալով, հարուստէ մը խրկուած ստակին համար անոր շնորհակալութիւն կը մատուցանէ:

ԳՍՍ ԺԴ .

1. Հետեւեալ գծերը լեցնել :

Նոր աշխարհի անապատներուն մէջ
գեղեցիկ գիշերուան մը տեսարան

Արեգական — մտնելէն ժամ մը վերջը, լուսինը
ծառերուն ետեւէն երեւցաւ : Գիշերուան թա-
գուհին կամաց — կը բարձրանար երկնից կա-
պուտակ կամարին վրայ, երբեմն խաղաղութեամբ
ձեմեղով, և երբեմն ամպոց կայտերուն — հան-
գըստանալով :

Երկրի տեսարանն ալ նուազ յափշտակիչ չ'էր .
լուսնի կապուտակագոյն և աղօտ — ծառերուն
մէջ կը տարածուէր, և — ճառագայթները մին-
չեւ անգամ ամենամթին — կը թափանձէր :
Գետը որ ոտիցս քովէն կը հոսէր մերթ ընդ մերթ
անտառին — կը կորսուէր և մերթ — մերթ
գիշերուան փայլուն համաստեղութիւններով լու-
սաւորեալ կ'երեւէր :

Գետին միւս — լայն մարդագետնի — մէջ,
լուսնի — անշարժ կերպով կը շողջողայր . դա-
լարիներու վրայ աստին — ցրուած և զեփիւ-
ռին քաղցրիկ շունջովը տատանող ցարասիները,
լուսի անշարժ ծովու — վրայ, շուքէ երեքուն
կղզիներ կը ձեւայնէին, հոս, ամէն — լուռ ու

մունչ էր, բաց 'ի մէկ քանի տերեւներու անկ-
ման շունէն, յանկարծական հովի — շունչէն,
և սարեակլին ընդ միջական և հաղուադիւտ ձայ-
ներէն : Բայց հեռուէն Նիակարայի — ջրերուն
թաւալմանց հանդիսաւոր ձայները կը լսուէր,
որ, գիշերուան հանդարտութեան մէջ անապատէ
— տարածուելով, միայնակ անտառներու — ա-
նրեւելոյթ կ'ըլլային : Մարդկային լեզուն չ'է կա-
րող մանրամասնաբար բացատրել — տեսարանիս
մեծութիւնը ու զարմանալի ներդաշնակութիւնը:
Ի զուր մեր մշակեալ — մէջ երեւակայութիւնը
կը ջանայ տարածուիլ, բայց ամէն կողմէն մարդ-
կանց բնակութիւնները կը հանդպին . սակայն այս
անապատ — մէջ հաճելի է հողւոյն անտառաց
ովկիանոսին մէջ, տարածուիլ, անեզր լճերու ե-
զերքը թափառիլ, ջրվիժուց անդունդները դի-
տել, և վերջապէս Աստուծոյ — առանձին գըտ-
նուիլ :

ԳՍՍ ԺԵ .

Սառէ գիւղը (չարունակութիւն)

1. Գրաբար ընել :

Աստուած այնքան բարի է, որ հիւսիսայգը
երկար ժամանակ այս աստղին լոյսէն զրկող եր-
կիրներու համար պահած է : Օգոստոս ամիսը

սկսելուն պէս ձիւն կուգայ, ջուրերը կը սառնին, գետնէն վեր բարձրացող քանի մը տունկեր ցուրտէն կը մեռնին: Միայն քանի մը մամուռներ և լոբեր կը տեսնուին, որք կրնան դիմանալ այս խիստ մթնոլորտին: Ծովեզերքները սառի կտորներով կը ծածկուին, որ իսկոյն բոլոր ծովին մակերեսոյթը կը ծածկէ:

Էօժ. Բայց այս անպիտան երկիրներուն մէջ մարդ չկայ:

Ուս. Քիչ կայ. բայց մասնաւոր ցեղ մը կը բնակի այս խիստ կլիմային տակ: Անդրիացի վերջին ճանապարհորդք Էսգիմօ ըստած Ժողովուրդը դտած են. սակաւաթիւ, բայց սա ճշմարիտ է որ խիստ առողջ և իրենց սառէ տուններէն դո՛հ:

Պօղ. Սառէ տուներ, կարելի չ'է այս, ցուրտէն պիտի սառնին:

Ուս. Ոչ, բարեկամքս, խիստ աղէկ կրնան պահպանուիլ անոնց մէջ հիւսիսային սառեցուցիչ հովերէն: Ահաւաստիկ ինչպէս կը շինեն զանոնք: Սառի կտորները կը տաշեն, ինչպէս հոս քարերը, ձիւնը չաղախի տեղ կը գործածեն: 25 էն 30 հարիւրամէթր թանձնութիւն և գրեթէ 70 հարիւրամէթր երկայնութիւն ունեցող սառի կտորներ կը դնեն իրարու վրայ, և ձիւնով իրատու կը միացնեն: Իսկոյն հիւսիսային հովը այս կտորները միակտուր պատ մը կը շինէ:

Էսգիմօցիք գեղեցիկ չ'են: Եւրոպացիներէն առելի փոքր են: Ղէմբերնին կըր և տափակ, աչքերնին սեւ և փոքր, և քիթերնին երկու խոշոր այտերու մէջ տեղ ընկզմած է: Խիստ տաք պահող հանդերձներ կը հագնին, որք երկայն պարեգօտէ մը և ծովային հորթի կաշիէ շինուած անդրավարտիքէ մը կը բաղկանան, և ձմեռը իրենց հանդերձները կը կրկնապատկեն:

Անդրիացիք այս սառէ դիւղին մէջ 70 մարդ գտան այր, կին, տղայ, և շատ մը շուներ, զորս իրենց փալսիրներուն կը լծեն, և իբր գըրաստ կը գործածեն:

ԴՄՍ ԺԶ.

1. Տղայէ մը իւր պաշտպանին զրկուած նամակ մը յորում անկէ շնորհակալ կ'ըլլայ:

2. Նամակ մը, յորում մարդ մը իւր պաշտպանին իրեն աշխատութիւնը եղող գիրք մը կը նուիրէ:

ԴՄՍ ԺԷ.

1. Գրել թէ ի՞նչ բաներէ կը բաղկանայ տուն մը իւր կահկարասիթներով հանդերձ: (Երկայնք)

ԴՄՍ ԺԸ.

Երկայն նամակ մը յորում մարդ մը ճանա-

պարհորդութեան երթալով իւր գլխէն անցած քանի մը այլեկոծութեանց դէպքեր և ուրիշ պատահարներ կը պատմէ :

ԴՄՍ ԺԹ.

1. Հետեւեալը գրաւար ընել :

Սառէ գիւղը (վերջ)

Խիստ տգէտ են . երկրի միմիայն բնակիչները կը կարծեն ինքզինքնին : Երկաթի գործածութիւնը գիտեն , և տեսակ տեսակ գանակներ կը շինեն անկէ : Ընդհանրապէս խիստ անմաքուր են :

Ժէրօմ : Ճշմարիտ չէ , պարոն , որ Էօփէն սրտախօս մ'է , բայց ինձ թէ ճանապարհորդութեան գրքի մը մէջ կարմիր ձիւն ըլլալը կարգացած է :

Բոլորը . կարմիր ձիւն :

Ստեփ . Անկարելի է այս : Լաւ կը տեսնես Էօփէն որ ճերմակ է :

Ուս . Խիստ անիրաւ ես Ստեփան : Այն բանը որ ճերմակ է , չկրնար ըսուիլ որ կարմիրը չ'ըլլար : Եւ դու , Ժէրօմ , իրաւունք չ'ունիս ըսելու որ ընկերդ Էօփէն ստախօս մ'է : Ստախօսութիւնը այնպիսի սոսկալի յանձանք մ'է , որ պէտք չէ այսպէս գիւրջն ընկերօջ գ վրայ դնել :

Ժէրօմ : Բայց , պարոն , կարմիր ձիւն երբէք տեսնուած չ'է :

Ուս . կը խարուխ , տեսնուած է , և երբեմն ալ կը տեսնուի : Չեղի խօսած երկիրներուս մէջ կարմիր ձիւն գտնուած է , Ալպեանց մէջ ալ կայ : Նաև յՄմերիկա : Այս երեւոյթը ճանապարհորդաց ուշադրութիւնը գրաւելու արժանի է : Այս ձիւնը , հալելով կարմիր փոշի մը կը ձգէ , որ նախ կարծուեցաւ թէ խիստ փոքրիկ կենդանիներ են : Բայց յետոյ ջանալով խոշորացոյցով ճանչցուեցաւ թէ տեսակ մը տունկէ յառաջ կուգայ : Այս փոշին տեսակ մը սունկ է , որ ձիւնի վրայ կը բուսնի : Բայց դասի ժամանակ է , ո՛ն երթանք , բարեկամներս , կարգաւ և ընութեամբ :



ՄԱՍՆ Գ.

Հետեւեալներէն իւրաքանչիւրը վերնագիր ընելով, տակերնին մէկ մէկ պատմութիւն և նամակ յարմարցնել :

Դասատուն կրնայ կարողութիւն ունեցողներուն գրաբար ընել տալ :

1. Մանուկ մը մեղուի մը ետեւէն կ'իյնայ, մեղուն բարկանալով զայն կը խայթէ :

2. Խումբ մը զօրքեր գողերու հանդիպելով, գողերը քաջութեամբ կը կռուին, և զօրաց կը յաղթեն :

3. Վիրաւորեալ մարդու մը վրայ շատ մը շուներ յարձակելով, մարդը քաջութեամբ դաստիարակութիւն կը ցուցնէ :

4. Քանի մը գայլեր հինգ մարդոց վրայ կը յարձակին, մարդիկ իրենց հրացաններովը զանոնք կ'սպաննեն :

5. Շան մը իւր տիրոջը ունեցած հաւատարմութիւնը :

6. Փիղի մը և վագրի մը կռիւր :

7. Յուլըս մը ցուլ մը որսալու ատեն, ցուլը իւր աչակերտը կ'սպաննէ. շուներէն շատերը կը վիրաւորէ, և մարդը հաղիւ զայն կը բռնէ միւս շուներուն օգնութեամբը :

8. Թէ ինչե՞ր են գիւղացւոյն զուարճութիւնները :

9. Որդի մը իւր հօրը նոր տարւոյ նամակ

10. Աղջիկ մը իւր մօրը » » »

11. Տղայ մը » » » » »

12. Աղջիկ մը իւր պաշտպանին » »

13. Երկու օձերու ըրած կռիւր :

14. Անխելք գողի մը պատմութիւնը :

15. Անապատի մը մէջ գեղեցիկ գիշերուան

մը տեսարան :

16. Գրեւ ադահի մ'ըրածները :

17. Զուարճալի պատմութիւն մը :

18. Հրդեհի մը պատմութիւնը :

19. Նաւակի մը մէջ գեղեցիկ գիշեր մը ծովու

վրայ եղած շրջագայութիւն մը :

20. Ովկիանոսի մէջ Պալէնայի վտանգաւոր

որսորդութիւն մը :

21. Զորիին, Գայլին և Աղուէսին առակը :

22. Կաղնիին և եղեգին առակը (երկայն)

23. Փոթորիկի ատեն նաւու մը մէջ գանուե-

լով հոն պատահածները :

24. Հովատ մ'անցնող գետի մ'եզերքը գեղե-

ցիկ գիշերուան մը տեսարան :

25. Փայտատական զինուորի մը քաջած նեղու-

թիւնները :

26. Գրեւ Հայրենեաց սիրոյն վրայ :
27. Թէ ինչե՞ր կարող է ընել բնութիւնը :
28. Թէ ի՞նչ պէտք է առողջ վիճակ մ'ունենալու համար :
29. Հայրենասէրի մը ու հայրենատեացի մը պատմութիւնը :
30. Մարդու մը իւր որդւոցը ըրած չարութիւնները :
31. Գրադրութեան համար վաճառականի մը գրուած նամակ մը :
32. Ծոյլի մը պատմութիւնը :
33. Մէկու մը կիներ մեռնելով բարեկամէ մը ուղղուած միտիթարական նամակ մը :
34. Կնոջ մ'այրը մեռնելով, ուրիշ կիներէ մ'անոր ուղղուած միտիթարական նամակ մը :
35. Մարդ մը իւր որդին կորսնցնելով, զայն գտնելու աշխատող կոմսէ մ'անոր ուղղուած նամակ մը :
36. Կին մը իւր աղջիկը կորսնցնելով զայն գտնելու աշխատող բարեկամէ մ'անոր ուղղուած նամակ մը :
37. Անայր կնոջ մը իւր փոքր զաւկէն քաշած նեղութեանցը համար իւր բարեկամուհւոյն գրած նամակը, յորում իւր որդին զննելու համար

- առ դպրոց մը կը խնդրէ, ինք դիւրը ըլլալով հոն դպրոց չգտնուելուն համար :
38. Աղքատէ մը իւր որդին դպրոց զննելու համար հաշուստի մ'ուղղուած աղաչական նամակ մը :
39. Առանց յանձանքի արտրեալ իշխանի մը առ թագաւորն ուղղեալ նամակ մը, յորում իւր անմեղութիւնը ցուցնելով ներողութիւն կը խնդրէ :
40. Հօրը տունէն վաճառուած որդւոյ մը հօրը գրած ներողութեան նամակը :
41. Գիւղը նստող կին մը նամակ մը կը գրէ իւր բարեկամուհւներէն մէկուն, յորում գիւղին զուարճութիւնները նկարագրելով, կը հրաւիրէ որ գայ քանի մ'օր իր հետ բնակի :
42. Մէկը գործի մը ձեռնարկելով իւր ընկերէն ուղղուած քաջաւերութեան նամակ մը :
43. Ընկերէ մը գիրք մ'ուղեւու համար նամակ մը :
44. Պանդուխտի մը առ ընտանիքն գրած նամակը :
45. Հայրենեաց սիրոյն վրայ փոքրիկ ճառ մը գրել :
46. Գիշեր ատեն ընդարձակ և երկայն գետի մը վրայ շրջադայութեան նկարագրութիւն մը :

47. Պատերազմի դաշտ մը նկարագրել, յորում պատերազմը նոր լմնցած է :

48. Դիւանի մը մէջ պաշտօն խնդրելու նամակ մը :

49. Նամակ մը յորում տղայ մը իւր պաշտպանէն դիւր մը կը խնդրէ :

50. Երկրաշարժի ատեն քաղքի մը մէջ պատահած խղճալի դէպքերը նկարագրել :


Վ Ե Ր Զ



Վ Ր Ի Պ Ա Կ

ԵՐԵՍ	ՏՈՂ	ՍԻՆԼ	ՈՒՂԻՂ
5	9	քել	քել
9	10	,	.
40	24	անասնոց	կենդանեաց
45	3	սատեցուցիչ	սառուցուցիչ
22	4	յանդուզն	յանդուզն
23	9	ղօրքերը	ղօրքերը
25	5-6	հոն առուցեալ.	հոն . սառուցեալ
26	16	և մերթ — մերթ	, և մերթ — մերթ
29	2	առելի	առելի
29	24	կարասիքներով	կարասիքներով



A decorative rectangular border with intricate floral and scrollwork patterns, rendered in black ink on a yellowish-tan background. The border is composed of repeating motifs of leaves, flowers, and scrolls, with more elaborate designs at the corners.

Գ/ն 100 ժարս

Արտահանված է 1957թ.

19

Ա. Բ.

~~107~~

8

ԲՈՒԿ	208
ՁՅՅՈՒՆ	8

2013

5135

« Ազգային գրադարան



NL0063570

